ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Մայիսի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Հանրապետության կրթության նախարար Մուստաֆա Մոյինին՝ ՀՀ կրթության նախարար Լևոն Մկրտչյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց կրթական ասպարեզում երկու երկրների միջև առկա համագործակցության, ինչպես նաև հայ-իրանական դարավոր բարեկամության ու պատմամշակութային առնչությունների մասին:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց, որ իրանահայությունը, շնորհիվ Իրանի բարյացակամ վերաբերմունքի, շարունակում է ապրել իր կրոնական-ազգային կյանքով: Նորին Սրբությունն իբրև ժողովուրդների բարեկամության ճշմարիտ արտահայտություն նկատեց Երևանում Կապույտ մզկիթի գործունեությունը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵՑ ՍՊԻՏԱԿՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Մայիսի 13-ին Վեհարանի դահլիճում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց սպիտակցի շուրջ 500 երեխաների:

Նորին Սրբությունն իր հայրապետական մաղթանքն ու օրհնությունը տվեց նրանց՝ պատգամելով լինել հայրենիքի ու Մայր Եկեղեցու արժանավոր զավակներ:

Երեխաների ուխտագնացությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածին նախաձեռնել էր սպիտակաբնակ Սլավիկ Հովակիմյանի ընտանիքը, որ մտադիր է նման այցելությունները դարձնել պարբերական: Ս. Էջմիածնում երեխաներն առիթ ունեցան լինելու նաև Մայր Աթոռի թանգարաններում: Ս. Էջմիածնից երեխաները մեկնեցին Երևանի Նորքի Հայորդյաց տուն, ուր նրանց համար գեղեցիկ համերգ էին կազմակերպել Հայորդյաց տան սաները: